

**«ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ
ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ
ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ (ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝
ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ) ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ
ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԶԱՓԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ
ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ
ՆԱԽԱԳԻԾ**

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2023 թվականի N -Ն

**ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
(ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՌԻՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ
ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ) ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ
ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԶԱՓԵՐԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

«Փրկարար ծառայության մասին» օրենքի 34.1-ին հոդվածի 1-ին, 18-րդ մասերի
և «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ
գրադեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 5.1-ին մասի համաձայն՝
Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել Փրկարար ծառայության տնօրենի տեղակալների, փրկարար
ծառայության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի
ծառայողների (բացառությամբ՝ Լիազոր մարմնի ուսումնական
հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն գրադեցնող
ծառայողների) ատեստավորման արդյունքներով հաշվարկվող հավելավճարի
չափերը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) սույն որոշմամբ սահմանված հավելավճարները՝ ըստ փրկարար ծառայության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի ծառայողների լիազորությամբ՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների, ինչպես նաև Փրկարար ծառայության տնօրենի տեղակալների ատեստավորման արդյունքների, սահմանվում են յուրաքանչյուր տարվա Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը հատկացված աշխատավարձի ֆոնդի սահմաններում,

2) փրկարար ծառայության տնօրենի տեղակալների, փրկարար ծառայության բարձրագույն, գլխավոր, ավագ, միջին և կրտսեր խմբերի ծառայողների լիազորությամբ՝ Լիազոր մարմնի ուսումնական հաստատությունում փրկարարական ծառայության պաշտոն զբաղեցնող ծառայողների ատեստավորման արդյունքներով հավելավճարը վճարվում է ատեստավորման օրվան հաջորդող ամսվա 1-ից,

3) հավելավճարների վճարումն իրականացվում է Փրկարար ծառայության տնօրենի տեղակալների, փրկարարական ծառայողների դրամական ապահովության վճարման հետ միաժամանակ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

ք. Երևան

Հավելված

ՀՀ կառավարության 2023թ.

_____ -ի N _____ -Ն որոշման

**ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼՆԵՐԻ, ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ, ԳԼԽԱՎՈՐ, ԱՎԱԳ, ՄԻՋԻՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԽՄԲԵՐԻ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
 ԲԱՑԱՌՈՒԹՅԱՄԲ՝ ԼԻԱԶՈՐ ՄԱՐՄՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
 ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆ ԶԲԱՂԵՑՆՈՂ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ
 ԱՏԵՍԱՎՈՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՀԱՇՎԱՐԿՎՈՂ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԻ ԶԱՓԵՐԸ**

ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայություն			
1		Փրկակար ծառայության տնօրենի տեղակալ	300,000
2	5	Գեներալական կազմ	520,000
3	39	Գնդապետ	500,000
4	38		
5	37		
6	36		
7	35		
8	34		
9	33		
10	32		
11	31	Փոխգնդապետ	400,000
12	30		
13	29		
14	28		
15	27		
16	26		
17	25		
18	24	Մայոր	
19	23		
20	22		
21	21		300,000
22	20		
23	19	Կապիտան	
24	18		
25	17		
26	16		
27	13	Ավագ լեյտենանտ	
28	12		
29	11	լեյտենանտ	
30	10		
31	9/5	Ավագ ենթասպա	210,000
32	9/4		
33	9/3		
34	8/6	Ենթասպա	
35	8/5		
36	8/4		
37	8/3		
38	7/3	Ավագ	
39	7/1		
40	6/5	Ավագ սերժանտ	
41	6/4		
42	6/2		
43	5/5	Սերժանտ	

